

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Ստանդին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Վաճառքով ընդունվում է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Անարարատ մանուկներին վիճակը.— Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակութեան և վարժականների
յարաբերութիւնը. Նամակ Նոր-Բայազետից. Ներ-
քին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիա-
կան միապետականների նոր ազդեցիկան. Արտա-
քին լուրեր.— ՀԵՌՈՒԳԻՆԵՐ.— ԲՈՐՍՍ.— ՅԱՅՏՍ-
ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բառեր, բա-
ռեր և բառեր.

ԱՆՀԱՐԱՋԱՏ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԹԻՖ- ԼԻՍՈՒՄ

Տեղական լրագիրները կարգաւորվ անդա-
դար հանդիպում են հետեւի լուրերի.
այս ինչ օր գտնվեցաւ Թիֆլիսի այս ինչ
փողոցում մի նորածին մանուկ, որը յանձն-
ված է Թիֆլիսի մանկաբարձական հաս-
տատութեանը:

Այնուհետեւ ի՞նչ է լինում այդ գտնված
մանուկների վիճակը.— հասարակութեանը
յայտնի չէ և մեր քաղաքի մանկաբարձա-
կան հաստատութիւնը հարկաւոր չէ հա-
մարում տեղեկութիւն և մանրամասն հա-
շիւ տալ հասարակութեանը գտնված ան-
հարազատ, որը մանուկների վիճակի մա-
սին, որքան են մեռնում նրանցից և որ-
քան կենդանի են մնում, վերջապէս կեն-
դանի միացողներին ի՞նչ են դառնում, որ-
տեղ են տրվում.— արդեօք ուսման են տը-
րվում, թէ գիւղացիներին են յանձնվում,
արդեօք որ և է արհեստներ, որ և է փե-
շակ են սովորեցնում, թէ կատարելապէս
անուսում են թողնում նրանց:

Այդ բոլոր հարցերին մեզ ոչ ոք պա-
տասխան չէ տալիս և մեզ կատարելապէս
անյայտ է մնում փողոցներում ամեն օր
գտնվող նորածին փոքրիկ մանուկների ա-
պագայ վիճակը, և այդ պատճառով հա-
սարակութեան մէջ այլ և այլ լուրեր են
պտտվում: Ասում են որ գտնված մանուկ-
ների մեծ տոկոսը մեռնում են մանկաբար-
ձական ինստիտուտում, ասում են որ փոք-
րի շատ հասակ առնելուց յետոյ այդ գրո-
նովի մանուկները զուրկ են մնում որ և է
ուսումից, և ամաւանդ արհեստագիտական
ուսումից, և այլն:

Թէ հասարակութիւնը և թէ մամուլը
չեն կարող չը հետաքրքրվել անապատան,
ողորմելի, անհարազատ մանուկների վիճա-
կով:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՌՆԻ, ԲԱՌՆԻ ԵՒ ԲԱՌՆԻ

«Արձագանք» լեզուագէտները իրանց օրգանի
վերջին համարում, «ի մեծ ուրախութիւն» ըն-
թերցողներին, վերջապէս աւարտեցին իրանց լե-
զուաբանական ըննադատութիւնները...

Մեր «Բառերի» հարազատ գաւառներին առ-
վորական նէյնի մէջ բոլոր վերջնականապէս ջրե-
ւաւ համար մենք կը կամենայինք մանրամասնա-
բար վերլուծել նրանց բոլոր ասածները, բայց,
տարաբաղդաբար, անկարող ենք այդ անել, որով-
հետեւ «Արձագանք» լեզուաբանական իւրեւ թէ
լուրջ յօդուածներին մէջ բացի անվերջանալի հա-
կասութիւններից, վերացական մութ դատողու-
թիւններից, աւելորդ ցիտատներից, անտեղի սը-
րամոտութիւններից և նոյն իսկ վիրաւորական
անկարելիութիւններից, համարեա ուրիշ ոչինչ չը
կայ: Եթէ ուրիշ մի բան կայ,—այդ էլ բառեր,
բառեր և բառեր:

«Արձագանք» անսպասելի ոգեւորութեամբ
ներշնչված լեզուագէտները մի տեղ ասում են թէ

կով: Մենք ներկայ մարդասիրական դարում
հոգում ենք ոչ թէ միայն մարդկանց մա-
սին, բայց և անասունների մասին, հիմնե-
լով և պահպանելով «կենդանիների պաշտ-
պանութեան» ընկերութիւններ: Ուրեմն ա-
ւելի էլ իրաւունք ունենք հոգալ մարդկա-
յին դժբաղդ փոքրիկ արարածների մասին,
որոնց աղքատ կամ անբարոյական ծնողնե-
րը փողոց են չարտում խեղճերին, շատ
անգամ բողբոջում են մեր, ինչպէս շատ կամ
կատուի ձագերին, որպէս զի ազատվեն նրանց
կերակրելու ու պահելու հոգսից և ծախ-
սերից:

Ո՛րք են մեր այլ և այլ բարեգործական
ընկերութիւնները, ի՞նչ է անում այդ դէպ-
քում քրիստոնէական եկեղեցին, որ
է մեր մարդասիրական զգացմունքը, այն
զգացմունքը, որը թելադրում է մեզ ան ա-
սուհիներին մասին հոգալու, սակայն մո-
ռացնել է տալիս մեզ մեր պարտաւորու-
թիւնը դէպի անտուն, անտէր, չարտված,
անօգնական, անհարազատ մարդկային փոք-
րիկ արարածները:

Քանի որ մենք ունենք արդէն «կենդա-
նիների հովանաւորութեան» ընկերութիւ-
նը, արդեօք մեր սրբազան պարտաւորու-
թիւնը չէր լինի մտածելու փողոցում
չարտված «Անհարազատ մանուկներին հո-
վանաւորող» մի ընկերութիւն հիմնելու...

Այդ տեսակ ընկերութիւնը ոչ թէ միայն
պէտք է հոգալ գտնված անհարազատ
փոքրիկներին նիւթապէս պահելու, կերա-
կրելու, կրթելու,—բայց և պէտք է հոգալ
նրանց ապագայ վիճակի մասին, պէտք է
այդ մանուկներին, յայտնի հասակում, յանձ-
նել արհեստաւորաց զարդաներին ու արհես-
տանոցները, որպէս զի նրանք անպատճառ
մի որոշ փեշակ սովորեն, կամ մինչև ան-
գամ պէտք է իր սեփական արհեստաւո-
րաց զարդան ունենան, յատկապէս փողո-
ցում գտնված անապատան, անհարազատ
երեխաների համար:

Բայց ե՞րբ պիտի հասնենք այդ տեսակ
հասարակական գիտակցութեան ու պար-
տաճանաչութեանը...

Մեր ունեւոր, ինտելիգենտ հասարակու-
թեան մէջ կայ միայն այն զգացմունքը, որ
ը կայ և ամեն կենդանու մէջ. մենք հո-
գում ենք մեր սեփական զաւակների մա-
սին, մենք հոգում ենք նրանց վրա, իսկ
ուրիշի զաւակները թող կոտորվեն,—մեզ
ինչ փոքր: Մեր մէջ կայ միայն ամեն ա-
նասունին յատուկ ծնողական զգացմունք:

Երբեք մշակող ժողովուրդն է, իսկ միւս տեղ
բացականչում են. «Մենք հօ գիտենք թէ ովքեր
են մշակել մեր աշխարհաբաւ լեզուն»։ Մեր եր-
դուեալ բոլորիսականները մի տեղ մեր աշխար-
հաբարի հիմքը, աղբիւրը ու անունը ժողովուրդ-
կան բարբառներին մէջ են տեսնում, իսկ միւս
տեղ գրաբար լեզուն են համարում մեր այժմեան
գրական լեզուի դայեակը, նրա մշակման հիմքը և
ուղեցույցը, և նոյն իսկ հայ չեն ուղում համարել
այն մարդուն, որ գրաբար չը գիտէ:

Այդ պարոնները ինքնամոռացութեան հասնե-
լով մի տեղ կրկնում են, որ այո, մեր դարում,
ընդհանուր քաղաքակրթութեան բարձրելու սե-
փականացնելու և վայելելու համար, մենք պէտք
է օտար լեզուներով բառեր փոխ առնենք, իսկ
մի ուրիշ տեղ, մոռանալով իրանց նոյն իսկ մի
քանի տող վերեւ ասածը, զայրանում, վշտա-
նում և նոյն իսկ կատաղում են, երբ հայոց լե-
զուի մէջ «Մշակը» գործ է ածում եւրօպական
բոլոր լեզուների համար ընդհանուր դարձած
բառեր:

Մի տեղ «Արձագանք» օպպօրտունիստ
հրապարակախօսները համաձայնում են այն մըտ-
քին հետ, որ մեր ժողովուրդը քաղաքակրթութիւնը
ամբողջապէս եւրօպական քաղաքակրթութեան
ազդեցութեան տակ է գտնվում, իսկ մի ուրիշ
տեղ զարմանում և ապշում են, որ մեր նոր լե-

հոգալ մեր սեփական մանուկներին մասին,
բայց մենք դեռ ևս չենք հասել աւելի
բարձր, հասարակական, ընկերական զգաց-
մունքին՝ հոգալ ընդհանրութեան մասին,
ուրիշների անտէր մնացած զաւակներին վի-
ճակի մասին...

Իսկ մեր ստորին ամբոխի մէջ ամեն ա-
նասուններին յատուկ՝ անհատական ծնո-
ղական զգացմունքն էլ շատ անգամ բացա-
կայ է, քանի որ ամբոխի մայրերն ու հայ-
րերը, երեխայ ունենալուց յետոյ՝ շատ ան-
գամ չարտում են նորածին մանուկին մերկ
և անօգնական դէպի փողոցը, ինչպէս շատ
լակոտին, կամ կատուի ձագին, յոյս դնելով
պատահական օգնութեան վրա... Եթէ
չարտված փոքրիկ արարածը չը մեռնի,
գուցէ անցողիկից մէկն ու մէկը կամ
մասնաւոր մարդը, կամ պօլիցիման կը բարձ-
րացնի նրան փողոցի աղբի կոյտի վրայից,
կը տանի ու կը յանձնի նրան մի որ և է
տեղ...

Այդպէս են դատում ու գործում մեր
ստորին տեղտ, խաւար, չքաւոր ամբոխի
հայրն ու մայրը: Բայց մեր հասարակու-
թեան ունեւոր, լուսաւորված, կրթված,
ինտելիգենտ դասակարգը արդեօք որ և է
օգնութեան ձեռք մեկնում է խաւար ամ-
բոխին, արդեօք առաքնութեան օրինակ է
դառնում խաւար դասակարգի համար: Ո՛չ,
նա անհոգ ու անտարբեր է մնում այդ
հասարակական թշուառութեան առջև.
Ի՞նչ փոքր հասարակական ցաւն ու ա-
ղետը, ասում է նա, ես իմ սեփական հա-
րազատ զաւակներ ունեմ, որոնց մասին
պէտք է հոգամ:

Ահա մեր հասարակական համբաւխու-
թիւնն ու բարոյական ընկերական փրկիսօ-
փայտութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԱՐԱԲ- ԵՐԻՍՈՒԹԻՒՆԸ

Մանկավարժական ասպարէզը, ինչպէս յայտնի
է, առայժմ մեր կանանց անկախ գործունեու-
թեան համարեա միակ ասպարէզն է: 15—20
տարի է անցել այն օրից, երբ առաջին անգամ
հայ կինը ոտը դրեց դպրոցի մէջ, իւրեւ կրթու-
թեան գործին ծառայող, իւրեւ նոր սերնդի կըր-

դուն էլ իր զարգացման ընթացքում ենթարկվում
է եւրօպական, այսպէս ասած, քաղաքակրթութեան
ազդեցիկ լեզուների ազդեցութեանը...

Եւ այլն և այլն և այլն:

Արդ, հարցնում ենք, ի՞նչ արժէք կարելի է
տալ այն յօդուածներին, որոնք լին են այդպիսի
հակասութիւններով և ինչպէս կարելի է խիստ և
մանրամասն կրթիկայի ենթարկել այդպիսի զըր-
վածները... Բայց ծիծաղելին այն է, որ մեր բու-
սիականները, իրանց այսպիսի հակասութիւննե-
րը վարաւորելու և միամիտ ընթերցողի աչքերին
թող փեշու համար ամեն մի հինգ տողից յետոյ
խօսը են գցում հինգերորդ դարու հայոց լեզուի
վրա, կրկնում են զանազան եւրօպական բառեր,
մի քանի տողով արծարծում են և վճռում քաղա-
քակրթութեան զարգացմանը, բերում են փոքր
ցիտատներ, և տեղի թէ անտեղի կրկնում են
այսպիսի Ֆրանցիս «Հառանգ ժառանգականու-
թեան անկարելի է յառաջադիմութիւն, ազդերի
փոխառութիւնները զաղափարական են, մենք
պարտւում ենք 19-րդ դարում (միթէ), գրաբարից
կախված մեր անցեալի ուսումնասիրութիւնը, իր
տառապանքներով և երջանիկ օրերով, մի խօսքով
Ֆրանցիսը, որ զանազան զրգերից սիրով արտա-
գրում են իրանց յիշատակարաններին մէջ սեմի-
նարիստները...

Հասկանալի է, որ այդ տեսակ՝ դէսից ղէնից

թող՝ հասարակական ասպարէզի վրա: Բայց,
տարաբաղդաբար, չը նայած այդքան երկար տա-
րիներին, չը նայած այն զգալի ծառայութեանը,
որ կինը ցոյց տուեց և ցոյց է տալիս կրթու-
թեան գործին, այնու ամենայնիւ մեր հասարա-
կական կարծիքը այնքան դեռ չը հասունացաւ,
որ կարողանար գէթ այժմ յարգանքով վերաբեր-
վել դէպի վարժուհու անձնաւորութիւնը, որ կա-
րողանար դնահատել կնոջ ձգտումները՝ անկախ
և օգտաւէտ գործունեութեան այդ ասպարի-
զում:

Վէպեր և վիպասանութիւններ չը պէտք է դը-
րել ցոյց տալու համար, թէ ինչ մեծ ըրիսկ է
անում շատ անգամ մի երիտասարդ օրիորդ, որ
համաձայնում է մի քանի հարկւր բուրլի ողորմե-
լի ուժեղով հեռանալ իր ծննդավայրից, իր ուս-
ման և ապրուստի կենտրոնից, և գնալ այս կամ
այն հեռաւոր քաղաքը կամ գիւղաքաղաքը՝ վար-
ժուհիութեան անկեղծ նպատակով:

Գործելու և մի փոքր անկախ դիրք ունենալու
ձգտումով ներշնչված, բայց մի և նոյն ժամանակ
դեռ ևս շատ էլ քիչ նախապատրաստված օրի-
որդները՝ յոյս դնելով դպրոցների անհոգ հոգա-
բարձուների հրաւերների վրա, յոյս դնելով հա-
սարակութեան սիրալիլ ընդունելութեան վրա՝
ճանապարհ են ընկնում ոչ թէ դէպի մեր գաւա-
ռական քաղաքները, այլ աւելի հեռու, նոյն իսկ
դէպի Պարսկաստան:

Սակայն այդ վարժուհիները մեծ մասամբ սխա-
վում են իրանց յոյսերի և սպասելիքների մէջ:
Հասարակական կարծիքը այս կամ այն խաւար
քաղաքի մէջ, հոգաբարձուների ինտրիգաները,
երբեմն վարժուհիների պատահական սխալմունք-
ների հետ միացած—սկսում են հալածել մեր
վարժուհիներին, բամբասելով նրան, զանազան
վիրաւորական լուրեր տարածելով նրա մասին,
կոտրելով նրա անունը, և յուսահատեցնելով նը-
րան թէ դպրոցում և թէ դպրոցից դուրս Այդ
դեռ բաւական չէ. զանազան քաղաքներից մեզ
հասած տեղեկութիւնները շատ անգամ այնպիսի
հրէշաւոր բաներ են հաղորդում վարժուհու վե-
րաբերութեամբ, որ մարդ ակամայ զղվում է հա-
սարակութեան այդքան նախապաշարված, տգէտ
և վատ ինստիտուտներով ներշնչված լինելուց,
անկեղծ ցաւակցութիւն զգալով դէպի մեր վար-
ժուհիների դրութիւնը: Մենք աւելորդ ենք հա-
մարում փաստեր առաջ բերելու, որից շատ
պարզ կերակր, թէ քննքան վատ և վնասակար
կերպարանք ունի մեր հասարակութեան յարաբե-

հաւաքած և կազմած յօդուածներին, մասնաւոր
երբ նրանք վերաբերում են մի այնպիսի ծանրա-
կշիւ հարցի, ինչպիսին է մի ամբողջ նոր լեզուի
մշակութեան հարցը, պատասխանել չէ կարելի և
չարժէ: Այդ պատճառով, մենք անտես ենք առ-
նում «Արձագանք» յօդուածներին հակասակա-
ն և ոչինչ որոշ, վճռական միտք չը պարունակող
մասը.—որը և իսկապէս կազմում է յօդուածների
ամբողջ շարքը, և մի քանի նկատողութիւններ
կան ենք դրանց այն կէտերի մասին, որտեղ «Մը-
շակից» են բերած օրինակներ, ցոյց տալու հա-
մար թէ «Մշակը» աղաւաղել է հայոց լեզուն, և
մտքերը է մեր լեզուի մէջ օտարաբանութիւն:

Նախ՝ մեր բոլորականները պէտք է իմանան
որ ոչ թէ այժմ, այլ սրանից 15—20 տարի ա-
ռաջ հայոց աշխարհաբար, նոր լեզուի մշակմանը
դարկ տալու համար, անհրաժեշտ էր ամենից ա-
ռաջ արդիւր դնել, սահմանափակել հին, գրա-
բար լեզուի անսահման ազդեցութեանը, որքան
կարելի է մեծ հոսանք մղեցնելով այդ լեզուի
մէջ՝ ժողովրդական բարբառներից: Այդ բանը,
ամենքս էլ գիտենք մեծ յամառութեամբ արել է
«Մշակը»՝ աշխարհաբարի միւս փոքրամիջի կու-
սակցիների հետ միասին «Մշակ» սանդուղ չը
պէտք է հասկանալ, ի հարկէ միայն պ. Գրիգոր
Արծրունուն, այլ այն բոլոր ոյժերը, որոնք գոր-
ծել են «Մշակի» մէջ, սկսած Գրիգոր Արծրու-

լուծվածը դեպի մանկավարժական գործունեությունն ուղարկված կանայք,—այդ փաստերը մենք առաջ չենք բերում, որովհետև նրանց մանրամասնությունները նոյն իսկ շատ անգամ անվայել են լրագրական խօսքի համար,—բայց չենք կարող լուծված տալ այդ տղեղ և անհամակրելի երեւոյթը, չենք կարող ծածկել մեր հակակրթվածը, որը ինքն ըստ ինքեան առաջ է դալիս դեպի հասարակական այդպիսի վարմունքը:

Ժամանակ է մի փոքր հասունանալու: Ինքը հասարակությունն էլ իր կողմից պատրաստ է, իր սիրալիր ընդունելությունը, իր ազնիւ պաշտպանութեամբ աւելի սիրտ տալ մեր կանանց, որպէս զի անկարելի գործունեութեան և մանկավարժական ասպարիզին նուիրված կանանց և օրիորդներ թիւը օրից օր շատանալ և ոչ թէ պակասել: Երբ հասարակությունը կը սկսի իր կողմից աջակցել իրական սեռի անկախ գործունեութեանը, երբ ինքը հասարակությունը իր կողմից մեֆիստֆելեան չարախնդրութեամբ չի վերաբերվի դեպի անկախ կերպով գործող կանանց դասակարգը,—այն ժամանակ թէ մեր իրական սեռի կրթութեան գործը աւելի աջող կառավարնայ, և թէ մեր վարժարանները չընկնեն աւելի կը մեծանայ և կը զօրեղանայ լաւ ոյժերով:

ՆԱՍՏԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ

Օգոստոսի 3-ին

Մի որ և է 15 օրվայ մէջ սիրողների խումբը կարողացաւ յօդուտ աշտեղի ուսումնարանի երկու ներկայացուցիչներ տալ. յուլիսի 17-ին խաղացին «Արշակ II» և «Ժլատ», որից դուտ արդիւնք մնաց 37 ր. 10 կ. (բացի 11 ր., որ տրվեց մի աղքատ աշակերտի) և նոյն ամսի 31-ին խաղացին «Շուշանիկ» և «Երեւ զաշեր», որից դուտ գալով թէ թատրոնի և թէ բեմի վերանորոգութեան ծախսերը 6 ր. 96 կ., դուտ արդիւնք մը, նաց 54 ր. 61 կ.: Այս վերջին ներկայացումը, թէ լաւ արդիւնքի և թէ աջող անցնելու կողմից, որին նպաստում էր թէ բեմի նորոգելը, թէ իրական սեռի բեմ դուրս գալը և թէ սիրողների եռանդուն մասնակցութիւնը, կարող է եղակի ներկայացում համարվել Նոր-Բայաջետում: Եւ այսպէս 15 օրում արդիւնք մնաց դպրոցին, այն էլ Նոր-Բայաջետի պէս տեղում, որտեղ շատերը տանը հաց չունեն ուտելու և այն էլ ամառվայ կարճ զիշերներում, 91 բուրլի 71 կօպ: Բայց չը նայելով այդքան եկամուտին, չը նայելով որ հոգաբարձութիւնը կասկածվում փող չունի վճարելու ուսուցիչների ուժինները, չը նայելով վերապէս սիրողների եռանդին, հոգաբարձութիւնը չը բարենշանց գտնէ մի քաղաքավարի չնորակաւուծիւն անել, այն ինչ հասարակութիւնը գնահատելով սիրողների խաղը ու առած օգուտը, չը նորակաւուծիւն էր յայտնում:

Այդ դպրոցի համար ընտրված են հինգ հոգաբարձուներ, որոնցից միմիայն պ. պ. Մատթէոս Արիւիկեան «Շուշանիկի» ներկայացմանը, իսկ Զորաբեանց «Արշակ II-ի» ներկայացմանը տո-

նուց, Բաֆֆիից մինչև այդ լրագրի ամսնալիքին աշխատակիցը և թղթակիցները: Իսկ մենք ամենքս օգ զիտենք, որ «Մշակի» քուրայի միջով են անցնողներ մեր գործերի մեծ մասը. մենք օգ զիտենք, որ այսքան երկար տարիների ընթացքում «Մշակի» միջոցով են արտադրվել հայոց կեանքի բոլոր ձգտումները և այդ ձգտումների հետ կապված մասաւոր արդիւնաբերութիւնները: Մեզ ամենքս յայտնի է, որ նոյն իսկ սորանից մի քանի տարի առաջ Կ. Պոլսում ահագին վէճ կար այսպէս կոչված գրաբարեան և աշխարհաբարեան կուսակցութիւնների մէջ, նոյնը եղել է և մեզ մօտ. մեզ ամենքս յայտնի է, որ դեռ սորանից 15—20 տարի առաջ մեր աշխարհաբար՝ նոր ծնունդ առնող լեզուն խեղդված էր գրաբարի ճիրաններում: Աշխարհաբարը գրաբարի ճիրաններից ազատելու համար հարկաւոր էր կատարել կռիւ. գրականութեան մէջ այն ժամանակվայ գործողների հետ, և այդ կռիւն արմատական կերպով մղեց «Մշակը», որին մեղադրում էին ու ա մի քանի անգամ և ան մէջ: Վերջապէս «Մշակի» լեզուն չէր կարող չը լինել ժողովրդական, չէր կարող չը լինել պարզ, քանի որ ինքը «Մշակը» հանդէս եկաւ պաշտպանելու, այսպէս ասած, ժողովրդական սկզբունքները, ժողովրդական շահերը, քանի որ այդ նոյն «Մշակը» սկսեց ապրել բուն ժողովրդի համար:

Կուն կերպով աշխատեցին և ծախեցին տոմսակներ, իսկ միւս հոգաբարձուները չէ թէ միայն այդ ներկայացմանը, նաև հոգաբարձական միւս գործերում, գտնէ այս վերջին տարում, միմիայն անունով են հոգաբարձու: Եւ պէտք է խոստովանված, որ յիշեալ պ. Արիւիկեան, որին պարտական է ուսումնարանի ներկայ նոր շինութիւնը իր դրոյթներով, այնքան ևս անհղով է աշխատում դպրոցի նկրտականի վրա, որ արժանի է հրապարակական չնորակաւուծիւն և այդ պատճառով էլ այս քանի օրս նա ստացաւ պատուաւոր հոգաբարձութեան կոնչակ վեհ. կաթողիկոսից ուսումնարանի նկրտականի համար իր արած ջանքերի համար:

Սիրողների այդ ներկայացումները տալու ցանկութիւններին մէկն էլ այն էր, որ ուղում էին ցոյց տալ թէ ինչքան բան կարելի է անել յօդուտ դպրոցի, եթէ լինի սէր և համբաւխութիւն, այն ինչ հոգաբարձութիւնը, որ պարտական էր աւելի շատ հողաւ և մտածել դրա մասին, ինքը խնդրանք էր սարքում և տեղի էր տալիս կռիւներին, որպէս զի ուսուցիչները ներկայացուցիչը չը տալով ուսումնարանը զրկվէր օգուտներից և յետադիմութեան դարկ արվէր ուսումնարանի առաջադիմութեանը: Եւ այս բաւական փաստ է, որ մի քանի երկուստարներ 15 օրում, ամառվայ զիշերներին կարողացան երկու ներկայացում տալով (որը երևանում էլ չէր աշխարհի) նորին դպրոցի օգուտն 91 ր. 70 կ., այն ինչ ամբողջ ձմեռվայ երկար և ձանձրալի զիշերներում, հոգաբարձութիւնը չէ աշխատել ոչ մի ներկայացում տալ:

Ցանկալի էր, որ այս բոլոր օրինակ լինէր հոգաբարձութեանը և եկող տարվայ համար հրաւիրվող ուսուցչական խմբին, որը աշխատէր համարաշիւ և սիրով գործել, որով կարելի կը լինէր թատրոնի էլ դպրոցի եկամուտի մի աղբյուր չիւնել: Այդ ամենակարեւորն է այսուհետև մանաւանդ, որ հոգաբարձութիւնը արձակելով ուսուցչիներին, պէտք է հրակրէ 8 նոր ուսուցիչներ և ինչ վճարէ ամեն մէկին 300-ական բուրլի, (որը ուսուցիչների վարձի ամենաբարձրն է), հարկաւոր է նրան 2,400 ր., իսկ ծառայի, վառելիքի և տան կարիքատանների համար ևս հարկաւոր է 300 ր. ուրեմն նրան հարկաւոր է 2,700 ր., այն ինչ ուսումնարանը ունի միայն 2,200 ր. եկամուտ: Հենց այս 500 ր. դեֆիցիտը ծածկելու համար հոգաբարձութիւնը այժմանից իսկ պէտք է նախադէ իր յարաբերութիւնը ուսուցչական խմբի հետ, որ կարողանայ, համբաւել լինելով նրա հետ, կարգադրել ուսուցչիներ թատրոնական ներկայացումները, որից թէ արդիւնք կը ստացվի և թէ ուսուցչական խումբը, սիրով վերաբերվելով իր գործին, առաջադիմութեան ցոյց կը տայ:

Ս. Տ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, օգոստոսի 21-ին, ԿՈՋՈՐԻ հայոց եկեղեցում, պատարագից յետոյ, եկեղեցու երեցի-

Եւ իսկապէս, եթէ կամենում էք, հենց դրանով պէտք է չափել ու բացատրել «Մշակի» մասնակցութիւնը և ազդեցութիւնը աշխարհաբարի մշակութեան գործում:

Գրաբարի ազդեցութեան սահմանափակելը և ժողովրդական բարբառների ճանապարհի բացանելն էլ եղաւ աշխարհաբարի մշակութեան զլխաւոր հիմքը. դրանով որովայն աշխարհաբարի դարգացման ճանապարհը: Գրանից յետոյ հարկաւոր էր միայն մշակել նոր լեզուի քերականութիւնը և հարստացնել նրան:

Այդ հարստացնելու սկզբունքը, ի հարկէ, միայն դրաբար լեզուն չէ. մեր նոր լեզուն հարստացնելու համար պէտք է դիմել ժողովրդական բարբառներին և օտար քաղաքակրթ լեզուներին: Աշխարհաբար լեզուի գրաբարի ճնշումից անկախ կերպով մշակելու գործը առաջ տարաւ «Մշակի» չիօրան, մի և նոյն ժամանակ եւրօպական լեզուների օգնութեամբ դիմելով, որպէս զի կարող լինի արդարացիել իր արժարժած և հայ գրականութեան մէջ դեռ չը շօշափած նոր մտքերը և հարցերը: Բաֆֆին իր գրածներով աշխարհակալ աշխարհաբարի կանոնադրելուն, աւելի էլ տարածեց այդ նոր լեզուն:

Այդ մի և նոյն նոր լեզուն մեր ժողովրդական գրողների միջոցով սկսած Արեւելանից մինչև վերջինները, մինչև Աղայեան, Պառլեան և այլն,

իսկ և երեք հաշւատեսներ ընտրութիւններ կայացան: Տէր Եղիշի քահանան կարողացաւ եկեղեցու հաշիւը, որից երկաց թէ եկեղեցին ունէր անցեալ տարի մօտը 1,300 բուրլի, իսկ ծախս 1,100 ր.: Նախկին երեցիկ Գովհանէս Բօսինեանց հրաժարեց իր պաշտօնից: Ընտրվեց երեցիկ Միքայէլ Տէր-Նիկողոսեան, իսկ հաշւատեսներ ընտրվեցան Գովհանէս Զիթիլեանց, Գովհանէս Բօսինեանց և Ալեքսանդր Քիշմիշեանց: Այսուհետև կարողացեց թիֆլիսի հայոց կոնսիստորիայի գրութիւնը, որով առաջարկվում էր Կօջօրի հայոց ժողովրդին վճել այն հարցը՝ արդեօք աւելի լաւ է ունենալ Կօջօրում մշտապէս մի և նոյն քահանայ, թէ ամեն տարի հերթով Վանքի մայր-եկեղեցուց այլ և այլ քահանաների ձեռքով հովուել: Կազմվեց և ստորագրվեց համախօսական թուղթ, որով ժողովուրդը խնդրում է կոնսիստորիայից ամեն ամառ դարձեալ տէր Եղիշի քահանային նշանակել Կօջօրի հայոց եկեղեցու քահանայ:

Նիժ-Նի-Նով-ԳՈՐՈՒՅԻ մեզ գրում են «Նիժնի-Նովոքոզդի» այս տարվայ տոնավաճառում առևտուրը շատ թույլ է անցնում: Այստեղ լինում են թէ ձիարշաններ և թէ մարդաբաշակներ: Օգոստոսի 13-ին տեղի ունեցաւ ձիարշակի հրապարակում մարդաբաշակ: Մարդիկ պէտք է քսան անգամ վաղորդվել շրջին մի հրապարակի շուրջը, որը 1 վերստ շրջապատ ունի, ուրեմն պէտք է վազ տալով 20 վերստ անէին: Մի քանի ուսանողի հետ մրցում էր և մի նիհար անգլիացի: Վաղորդների մեծ մասը յօդնեցան և միայն երկու հոգի, մի ուսուցչական անգլիացին, մինչև վերջը տարան իրանց յանձն առած իրօրը: Գաղթանակը տարաւ անգլիացին, որը 1 ժամում և 23 րոպեում քսան վերստ անցաւ և ստացաւ ձիարշակի սիրողների խմբից 250 բուրլի պարգև: Նոյն տարածութիւնը ուսուցչական 1 ժամում և 25 րոպեում և ստացաւ 25 բուրլի պարգև: Օգոստոսի 15-ին նոյն անգլիացին պէտք է ձիու հետ մրցելով արշաւէ:

Թիֆլիսի գանձատան գանձապահի օգնական Խվանովի գործի սկզբնական քննութիւնը, «Тѣх-Лисск. Листок» լրագրի խօսքերով, վերջացած է: Գատի են եղել արված խվանով և նախկին գանձապահ Բէկիսանով, որին մեղադրում են ծառայութեան ժամանակ անխղճութեան մէջ, որի շնորհով խվանով կարողացաւ գանձատնից 313 հազար բուրլ գողանալ: Գանձաբանի ամբողջ վրնասը կատարելապէս ապահովված է Բէկիսանովի և Խվանովի գրաւակաւում և մեղադրանքների ուրիշ չարժական կայքերով:

Տեղական ուսուցիչները հայոց դպրոցում են, որ մեր աշխարհաբարական ընկերութեան անդամ, երկուստարը երկուստար բարձր ֆոն-Ունգեր-Շտեր-բերդ շատ աջող կերպով բարձրացել է Էլբրուսի վրա, այն էլ արեւելեան կողմից, որով մինչև այժմ ոչ ոք չէ բարձրացել: Օգոստոսի 11-ին նա բարձրացաւ Իրիշկատ, Ատրիում և Զէլկատէն: Դէկ սառուցներով, որոնք անմերձեանքի են հա-

ստացաւ և դեռ կը շարունակէ անդադար ստանալ հարուստ պաշար ժողովրդի բարբառներից: Վերջին 20 տարիների ընթացքում ամենից քիչ պաշար մեր աշխարհաբար լեզուն գրաբարից ստացաւ. դրա պատճառներն էլ գուցէ պատահական են: Այդ պատահական պատճառներից ամենագլխաւորը այն է, որ գրաբարի ազդեցութեան բարեկամները իրանց չիօլայով և անաղիք-ցիկ գործներով շատ քիչ ազդեցութիւն ունեցան իրանց գրականական վաստակներով չարգեցին ժողովրդի վրա, իրանց գործունեութեամբ մի ուրիշ ճանապարհ չը բացարին. և մինչև այժմ էլ այդ չիօլային պատկանողները գրածները շատ քիչ են կարդացվում, և ուղեցոյցի դեր չեն կատարում:

Սակայն դոցանից անկախ կերպով աշխարհաբարը անընդհատ դարգացել, հարստացել և կուսկել է:

Կարգացել 1872, 1875 թվականներին «Մշակը» և վերջին տարիներին «Մշակը» և կը տեսնէք, թէ որքան զգալի տարբերութիւն կայ այն ժամանակվայ աշխարհաբարի և այժմանի մէջ: Կարգացել Բաֆֆին «Պարսկաստանի նամակները» և մի քանի վէպիկները, որոնք տպված են «Մշակի» 1872 թվի, այսինքն առաջին տարվայ համարների մէջ, և նոյն Բաֆֆի միւս վէպերը և յօդածները, որոնք տպվել են «Մշակի» մէջ տարիներ

մարդում: Ինչպէս զգալի են նա հասաւ օգոստոսի 13-ին, անցկացնելով գիշերը 9,000 ֆ., իսկ միւս անգամ 14,760 ոսնակաւ բարձրութեան վրա ծովի մակերևոյթից: Երրորդ գիշերը պ. ֆօն Ունգեր-Շտերբերգ անցկացրեց 17,840 ոսնակաւ բարձրութեան վրա, Էլբրուսի գագաթները մէջ, 180 բարեխառնութեան, սարսափելի փոթորիկի և բուրի ժամանակ: Օգոստոսի 15-ին պ. ֆօն-Ունգեր-Շտերբերգ իջաւ լեռան գագաթի հարաւային կողմից կատարելապէս առողջ:

«НОВОСТИ» լրագրի հայոց դպրոցում է, որ պօլիտիկան Նիժնի-Նովոքոզդի տոնավաճառից արտոնող արդէն 500 հրէաների, որոնք ընտրվեցան իրաւունք չունէին քաղաքում. մի քանիսն էլ կամաւորապէս կատարում էին պօլիցիայի կարգադրութիւնը, իսկ մի քանիսն էլ տապալ ուղարկվեցան իրանց հայրենիքը: Այս օրերս հրէական գործերի վերաբերեալ յանձնաժողովը վճռեց էլ հարկը մարդ արտոնել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻԱԿԱՆ ՄԻԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՐ ԱԳԻՏԱՆ

Հեռագիրը արդէն լուր բերեց, որ Ֆրանսիայում նորերս երեք ղեկավարամենտներում կատարված լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ ընտրվեց զենեքալ Բուլանժէ: Այդ մասամբ անսպասելի եղելութիւնը բաւական արժեքի հանց փարիզում, երբ համարակալականները հաւատացած էին, որ լախտախնդիր զենեքալը, միապետականների այդ ճարպիկ գործիքը՝ արդէն վերջնականապէս ջարդվեց:

Սակայն արտասահմանեան լրագիրների հաղորդած տեղեկութիւններից երևում է արդէն, որ միապետականները և Բուլանժէի կողմնակիցները այնպիսի եռանդուն միջոցների են դիմել, որ կարելի էր սպասել թէ ֆրանսիական ընտրողների անտեղի ուղեւորութիւնը կարող է աջողութիւն տալ Բուլանժէին, որը ոչինչ չէ խնայում՝ հասարակ դատակարգի մէջ ժողովրդականութիւն ձեռք բերելու համար:

Այն ղեկավարամենտներում, որտեղ ընտրված է Բուլանժէ, և որոնք 1885 թվականին էլ միապետականներին ընտրեցին, վաղուց արդէն ահագին պայքարանքաւ է լինում: Բուլանժէի կուսակցութիւնը այժմ իր ձեռքի տակ բաւական դրամական միջոցներ ունի, որով կարողանում է վարձականներ պահել: Այդ ղեկավարամենտներում կազմակերպված են ընտրողական գործակալութիւններ. այդ գործակալութիւնները հեղեղի պէս թափում են Բուլանժէի պատկերները և կենսադրութիւնը, որոնք գրված են ամենաողորմած ներբողեաների ձևով: Տարածում են ամեն կողմ Բուլանժէին նուիրված լրագիրների համարները՝ բանտերներին խոտաւում են Բուլանժէի կողմից մեծ բարիքներ և առատութեամբ հիւրանորում են նրանց զարկնելու և օղիով Այն քաղաքներ:

անցնելուց յետոյ, և դուք կը տեսնէք թէ ինչ կերպով էր մշակվում «Մշակի» լեզուն մասնաւորապէս և աշխարհաբարը ընդհանրապէս:

«Արձագանքը» ասում է, որ Բաֆֆին «Փոռնը» աւելի մաքուր և աւելի գեղեցիկ լեզուով է գրած քան թէ նրա միւս վէպերը, որոնք տպագրված են «Մշակի» մէջ: «Արձագանքի» յօդածագիրները դիտմամբ ստաւ են ասում, յոյս ունենալով իրանց ընթերցողների տգիտութեան վրա, և կամ իրանք տգէտ են, և չեն հասկանում, որ ահագին տարբերութիւն կայ «Փոռնը» լեզուի և «Գեռնի» ու «Գաւիթ Բէկի» լեզուի մէջ և վերջինների լեզուն անհամեմատ աւելի մշակված է:

Մեր բուստիականները ասում են, որ «Մշակի» լեզուն մտցնում է հայոց լեզուի մէջ այնպիսի ամենահասարակ ուսուցչական բառեր, որոնց հայերէնը հանրածանոթ են և ընդհանուր գործածութիւն ունեն: Եւ նորա իրիւս ապացոյց, զանազան բառերի հետ միասին հետեւեալ բառերն են բերում, դնելով իրիւր թէ նոցա հայերէն թարգմանութիւնը: Այս այդ բառերից մի քանիսը. դեֆիցիտ—պակաս, կոնգրես—դեպուտատ, ակցիլ—մաքսահարկ, պրոգրամ—ծրագիր, դիւրեկտոր—տեսուչ, պրոպագանդա—գրգռում, ֆակուլտետ—բաժին և այլն:

Երեւոյթի է ճշմարտութեամբ այդ բառերը ուսուցչական չեն, երկրորդը այդ բառերը համարեա

—	—	Բենարար. Տավր.—	100	>	25	>
—	—	Նիթ. Սամար.—	101	>	—	>
—	—	Վիլնայի.—	100	>	75	>
—	—	Թիֆլիսի—27 և 43 տ.—	—	>	—	>
—	—	Բուխարայի—18 և 43 տ.—	—	>	—	>
Վ. Օլժսկո-կամսկի բանկի ակցիաները	675	>	—	>	—	>
Ռուսաց երկաթուղիների գլխավ. ընկ.	243	>	—	>	—	>
Ռիբինսկ-Բոլոգոյի ընկ.	82	>	50	>	—	>
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլի- գացիաներ.	93	>	75	>	—	>

Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	93	>	50	>
Սիբիրյան.—	93	>	50	>
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.—	—	>	—	>
Ս. Պետերբուրգի քաղաքային արամադրութիւնը	—	>	—	>
Հատ աւուր է:	—	>	—	>

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԴՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԳՊՐՈՑԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատկեր ունի յայտնելու ի զիտութիւն Հասարակութեան, որ օգոստոսի 25-ից կը լինի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՆՈՐ աշա-կերաների միմայն երկրորդ, երրորդ, Հինգերորդ և վեցերորդ դասարանների համար, իսկ նախապատրաստական և առաջին դասարաններում բոլորովին տեղ չը կայ: Ծանկացողները պէտք է խնդրի Հետ ներկայացնեն իրանց ծննդական և ծաղկի վկայականները ևս Ուսումն սկսվելու է սեպտեմբերի մէկից: Տեսուչ Ս. Բ. Բէգ-Նազարեանց 2—3

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆԹԵԱՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ համաձայն առաջիկայ սեպտեմբեր ամսի 11-ին կատարվելու է քաղաքիս ԲԵՒՂԵԼԻՍ տուրք Աստուածածին եկեղեցու ԵՐԵՑՓՈՒՆԻ ընտրութիւնը, իսկ նոյն ամսի 18-ին ընտրութիւն երեցփոխանի ՏԱՓԻ-ԹԱՂԻ (ԳԱՐՁԵԱՆ) Սուրբ Գէորգ եկեղեցու Ուստի յիշեալ եկեղեցաց մեծապատիւ ծխականները հրաւիրվում են նշանակել օրերում առաւօտեան ժամի 11-ին սուրբ պատարագից յետոյ մասնակցելու ընտրութեանց: 2—2

ՎԱՐՁԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՆ ԿՈՆԽԱՍՏՈՐԻԱՅԻ առնելու մէջ նշանակած է ԱՃՈՒՐԻ առաջիկայ սեպտեմբերի 16-ին, առանց կրկնաձուրդի, կապալաւ տալու համար մի կրպակ, որ պատկանում է Կուրկի Սուրբ Աստուածածնայ եկեղեցուն և դատնվում է Միխայիլովսկայա փողոցի վրա նոյն եկեղեցու մօտ: 2—3

ԳԱՂԱԳԱՑԻՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ նորեկների խնդիրների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն սեպտեմբերի 1-ից մինչև 10-ը: 3—3

Իրիզեկի գրավաճառանոցում ծախվում է Կովկասի ուսումնարանական չրջանի հոգարարութեան խորհրդից թողուցութիւն ստացած Արի-ճուղեանի և Տեր-Գարրիկեանցի կազմած «НОВАЯ КНИЖКА ДЛЯ ОБУЧЕНИЯ РУССКОМУ ЯЗЫКУ въ армянскихъ начальныхъ школахъ г. І и ІІ» դասագիրքը: 3—3

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿԵՆ Ուսումնարանների համար հարկաւոր է ԱՐՈՒՆԻՑԻ 21 դասով ուսուցող լեզուից: Ծանկացողները պայմանների մասին կարող են դիմել Թիֆլիսի պ. լեռն Թաթևեանցին, առաւօտեան 8—10 ժամը այս հասցեով. Тифлисъ, Авчалъская ул. д. № 57. 3—3

ՇԻՐՎԱՆԱԶԱԴԷ
„ԱՐԱՄԲԻՆ“
Վէպ:
Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական գրավաճառանոցում, իշխ. Բէգ-Նազարեանի և Ս. Բ. Բէգ-Նազարեանի գործակալութեան մէջ և հեղինակի մօտ. Тифлисъ, Редакция „Ардаганъ“, Ширванзаде.
Գինն է 75 կօպ.
Հանապարհածախսով 1 ր.
5—10

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ, որ լաւ գիտէ հայկական ձայնագրութիւն և ունի աղող ձայն, կամենում է ձայնագրութեան դասեր ունենալ գաւառական ուսումնարաններից մինում: Պայմաններն են շաբաթական 12 դասի համար, տարեկան 300 ր., իսկ եկեղեցու մէջ տիրացութեան համար 100 ր., բացի սրանից մի սենեակ և վառելիք: Ծանկացողը կարող են դիմել Եղիշի քահանայ Երզնկեանցին Թիֆլիսում: 3—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ ցանկանում է որ և է մի տեղ հայոց դպրոցներում ուսուցչութեան պաշտօն ունենալ: Կարող է աւանդել հայոց լեզու, ուսուցող լեզու, ուսուցող աշխարհագրութիւն և պատմութիւն, նոյնպէս ընդհանրութիւն: Հարաբերական 26 դասին 600 րուրի վարձատրութիւն: Պատրաստ է դնալ ամեն տեղ: Հասցէն. ԿԱՐՇԷ, Երվանդու Բասիլ-Եւիչու Կազարիպու. 3—5

Societa Generale italiana di Navigazione.
117 ԱՌԱՋՆԱԿԱԳԻ ՄԵԾ ՇՈԳԵԱԿԻ ՈՒՆԵՑՈՂ
ԻՏԱԼԻԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԳԻՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրօպայի, Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ: Հողեւանները Բաթումից դուրս են գալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ:
1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են գալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր գծերը և Կ. Պօլիս:
Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ձանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Է. ԶԷՐՈՒՑԻՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ—ԳՕԺՈՎՆԱԿԻ պրօպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իշխ. Գուրիկեի տանը: 19—40

ԲԻԼԻԱՐԴԻ ԳՆՏԵՐ
Մեծ ընտրութեամբ, կիներ և նրանց համար կաշի ծախվում են ձախարակագործ վարպետ Վ. Գովիլիովսկու մօտ, Օդէսայում, Կրասնի պէրեուլ, տուն Շվարցի (Одесса, красный переул. д. Шварца, токарн. мастеръ В. Говиликовскій).
5—10 (2)

Z-BOUQUET-Z-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՕԾԱՆԵԼԻԲ
գործարանի Բ. ԿԵՕԼԵՐԻ ԵՒ ԸՆԿ., Մոսկվայում
Որպէս «Z» տառը վերջինն է այբբենարանում, նոյնպէս և այս նոր անուշահոտ օծանելիքի բաղադրութիւնը վերջինն է պարֆիւմերական արտեստի մէջ: Միացնելով իր մէջ փրանսիական և անգլիական ամենաուշակաւոր անուշահոտ օծանելիքների բոլոր լաւ յատկութիւնները, նա զարմանալի նուրբ և զեղեցիկ հոտ ունի, չը նայելով այն բանին, որ այդ օծանելիքը իր ամբողջութեամբ գերազանցում է մինչև անգամ անգլիական ամենաուշահոտ օծանելիքին և մի և նոյն ժամանակ գործածութեան ժամանակ հոտը չէ կորցնում:
Ծախվում է գաւառներում բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա: № 5. II. К. О. (1—3)

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԾԱՂԿԱՋՈՒՐ
(ծաղիկ օղեկօղծն)
Լաւ տաւալտային ջրերի ճանաչող-գնահատողների համար:
Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր առևտրականների մօտ. Մոսկվայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլայայա փողոցի վրա: № 5. II. К. О. (1—3)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԻՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՍԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, սեպտեմբերի 1-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգենաւը, նաւապետ ԲՕՇԵԼ (BOSCHEL) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում լէմբօղուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախկին Արժունի գալլերէում, № 103. 3—3

ԿԵՐՈՍԻՆԻ ՊԱՀԵՍ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԴԷՊՕ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԵԼԻ
Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՏԻ
Զտնվում է վօկզալի մօտ, Կասպեան-Սև-ծովի նաւթադրոշմական ընկերութեան պահեստում, Նախկին Կարալիլովի
ԿԵՐՈՍԻՆԻ ԵՒ ՄԱԶՈՒՏԻ ՎԱՃԱՌՈՒՄԻ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
20—25 (2)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
Россійское Общество Застрахованія капиталовъ и доходовъ
УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ
ԲԱՐՁՐԱԳՈՐԸ ՀԱՍՏԱՎԱԾ
Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան
հիմնված 1835 թ.ին
Ամենահին և միակ ուսուցող ընկերութիւն, որը բացառապէս պարապում է կանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 8,000,000 ՐՈՒԲԼԻ
1. Կապիտալների ապահովութիւնը ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում
2. Կապիտալների ապահովութիւնը ԾԵՒՈՒԹԻՒՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆԲԸ ապահովացնելու համար
3. Եկամուտների և ցմաճ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վելիամիլովսկայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԷՆԲԵՐԳԻ
—ՊԱՀԱՆՁՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿՈՒԹԵԱՄԲ—
Թիֆլիսի և Կովկասեան ուրիշ քաղաքների համար 16—32 (2)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ
ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՏԻ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑԱԻ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ
Գանձակայա փողոցի դիմաց, Սաքովայա փողոցի վրա տ. № 38
Գիշերօթիկներին, կիսագիշերօթիկներին և երթևեկների ընտրութիւններն և ընդունելութիւնը կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից: 3—3

Թիֆլիսի «Տպագրական ընկերութեան» հրատարակութեամբ՝ մամուլի տակն է և մինչև առաջիկայ սեպտ. մէկը լոյս կը տեսնեն Սահակ քահանայ Սահակեանցի հետեւեալ աշխատութիւնները ա) ՍՐԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հին-ուխտի (աշակերտաց համար) և բ) ԳԱՍԱԳԻՐ ԿՐՈՆԻ (առաջին զրբի նիւթի մշակութիւնը՝ ուսուցչաց համար): Վերջին գիրքը պատկերազարդ է և պարունակում է իր մէջ հրէից սրբազան անթերը և քարտէզներ: 5—5